

ՃԱՌ ԻՆԹԵՐՑԵԱԼ.

Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՑ

Տեսորին ՚ի Գաևճ Լեզուին Հայոց կամ ՚ի
Ստեփանեան Բառարան :

• Ի ԱՃԱՀՄՏՏՒՑ և ԾԵՐԱԳԵԼՍՍ՝ ՚ի Հըմ
տութիւն նախնեացն գրաւոր աւան-
դից , և ՚ի տեղեկութիւն հայրենական
բարբառոյն և ՚ի Ծարդմանութիւնս լե-
զուաց գործի բարդաւաճանաց դպրու-
թեան և մակացութեանց՝ ծանուցան
միշտ Ի՞առազիրք . զօր և այժմ յաճա-
խապէս տեսանեմք ՚ի հրահանգասէր ա-
զննս նորանոր բառարանս յերիւրեալ և
յարդարեալ ըստ իւրաքանչլւր լեզուաց
և գիտութեանց և արուեստից . և որ-
չափ յաճախեն մատեանքդ՝ այնչափ և
պէտք նոցին առաւել բացածանուցա-
նին . և նախնի երկասիրողացն յարզի
ջան և վաստակ , և գոհութիւնք մեծա-
մեծք արձակին որոց զառաջինն ըստ ազ-
գաց ազգաց ձեւն արկին հաւաքել զտա-
րերս խօսից , և հաւաքեցին զգիրս բա-
ռից , մինչ ևս էր զրոշմագիր արուես-
տին հրատարակեալ զմատեանս , և սա-
կաւուց ևեթ հանդիպէր գտանել զօրի-
նակագիրս , և բառք ՚ի բերանս յածեալք՝
տակաւ ըստ յառաջել ժամանակին ՚ի
խորս նորին անկեալք անհետ լինեին :

Պանծան Հնդիկք և սիրանան Եր-
րոպէացիք ընդ երկհազարամեայ հին
բառարանս սրբազան լեզուի նոցա , ո-
րով ցայսօր կենդանի պահի սանսկրիտն
բարբառ վաղեմի . պանծալի և Պարսից
բառարան ձանալի առ նոսա , այն որ և
՚ի մերս ածանցեալ է լեզու և ՚ի տիպ
արձանացեալ ՚ի լիստանդնու քաղաք :
Պանծանաց նոցին հաղորդել ամենայն
իրաւամբք արժան է և զմերոյ ազգիս
բանասէրս , որք անդստին յժկ և յա-
ռաջնոց իսկ դարուց ձեւն արկին հա-
ւաքել և յօրինել բառարանս հայեցիս ,
կամ լուծմունս գժուարին բառից կար-
դել , որպէս զրոյն Փիլովսի , Պաղիենո-
սի բժշկականացն՝ որոյ մատեանն չիք

արդ ՚ի միջի մերում , Ա արդան զրոյ՝
այն է Եղիշէի պատմութեանն , և այլոց .
և հնագոյն քան զսոսա թուին ինձ Հո-
մերական անուանեալ կամ քերգողա-
կան բառից բառարանք , սուղ ինչ կըր-
սեր քան զիմարդմանչայն դար կամ զսդ
նմին , քանզի լուաք ՚ի համբաւուց և
բառարանս յանուն Ծարդմանչաց : Եւ
թէպէտ որ արդ ՚ի մեր ձեռս կան նախ-
նեաց բառազիրք համառօտք իցեն և
ոչ քաջ մեկնողականք , գոյ կարծել թէ
և ընդարձակագոյնք քան զնոսին կային
և գուցեն իսկ ցարդ և երկեցին ՚ի ժա-
մանակի իւրեանց . ընդ որս և այլ բա-
ռարանք յօրինեալք ՚ի յետին դարս , զոր
օրինակ Ո՞աղաքիայ դպրի առն բանա-
սիրի և ընթերցողի , որոյ չկայ առ մեզ
գործդ այդ , և ուրեք ուրեք յիշատա-
կեալ բառարանք , զոր օրինակ ՚ի վանս
Պաղատիոյ , և այլուր :

Խակ ՚ի ծանօթիցն մեզ ազգային Ի՞ա-
ռաբանաց՝ Ճոխութեամբ բառից , և
պատշաճ դասաւորութեամբ , և լատին
Ծարդմանութեամբ , քաջ ՚ի բաց գերա-
զանցէ զայլովքն՝ Հայկազնեան Ի՞առա-
բանն Ատեփանսոսի Ատեփանեան վար-
դապետի Ո՞օչքեանց Լամենիցացոյ .
որոյ համբաւ վաղ ուրեմն հասեալ առ
մեզ հանդերձ մասամբ ինչ փոքրու գոր-
ծոյն՝ ածեցուցանէր զփափագ բոլորին
ևս ծանօթութեան , որում և հասաք
անագան յետ զլսաւորելց տպագրու-
թեան մեծիս մերոյ Հայկազեան Ի՞ա-
ռաբրոց :

Զիշէ ապաքէն կաճառդ արդոյ , քա-
նի փութով և յօժարութեամբ զամ-
օրեայ ժամանակ գումարեալ Համօրէն
բանասիրացդ պարապէիք յընդօրինա-
կութիւն հարուստ մատենին . իսկ իմ
ոչ ժամանեալ ձեռնտու լինել յայնժամ
վաստակոյն՝ միտ դնէի համբաւուցն , և
եթէ ոչ խարիմ լսէի յումանց ստգիւտ
և երկբայութիւն զհաւատարմութենէ
մատենագրին , և զվկայութեանց Հել-
էն և Հոռոմ օրինակագրաց , իբրու
թէ ինքնաձեռնաբար Ծարդմանեալք
կամ կեղծեալք իցեն ՚ի նմանէ , և այլ
ինչ այսպիսիս , որովք ոչ ըստ ակնկա-

լութեան յուսոյն թուէր դտեալ գործն։ Իսկ իմ յառաջ քան զայս ամմի և կէս՝ կամեցեալ զանտիպսն առ ՚ի մէնջ հաւաքել զբառու՝ ընթերցայ սիրողաբար զբովանդակ մատեանն ծայր ՚ի ծայր, հաւաքելով զբառուն և զպատմական գրուածոց հատուածս՝ զորոց չունիմք զբնագիրս։ Այ ՚ի քննելն ոչ ըստ նախ կարծեացս կեղակարծ կամ վարկապարազի ինչ այնուշետե երեւէր ինձ սոփերն այն, այլ մանաւանդ գովելի և ազնիւ վաստակ։ Այ այժմ աղաչեալ յումենէ եղբօրէ հասարակել բանասիրաց զիմտեսութիւնս զմատենէն՝ ահաւադիկ առաջի առնեմ կարծ՝ ՚ի կարծոյ, զանց զբազմօք ևս արարեալ խնդրովք, զորս ոչ իսկ ունէի ՚ի մտի քննել յընթերցման իմում, զայսոսիկ միայն գլուխս բանից։ Այսի, թէ ընդէր յոմանց ՚ի մէնջ կեղակարծելի դատեցաւ մատեանն, կամ թէ որչափ հաւատարմութեան արժանի իցէ հեղինակն։ Բ, յօհէ որ իցէ հեղինակն և ուստի կամ ուր հաւաքեաց զբառուն։ Գ, Ո՞ր այնոքիկ իցեն թարգմանութիւնք յունականք և լատինականք։ Դ, Օ՞նչ պատմական զըրուածոց յիշատակք ՚ի նմա։ Ե, Այ զինչ այլնշանաւոր բանք կամ աւանդութիւնք կամ ականաւոր մատենազրաց վաստակք յիշատակեալք անդանօր։

Ա. Կեղակարծ առ ոմանս երեւելց բառագրոց Ատ։ Կամենիցացոյ ես ոչ դտանեմ այլ պատճառու, բայց գուցէ զայն՝ զի ուրեք ուրեք ըստ խելաց իւրոց առնէ ստուգաբանութիւնս բառից ոչ հաւանելիս։ սակայն յայսմ թերութենէ և ոչ զոք ազատ համարիմ ՚ի ստուգաբանից, զոմն առաւել և զոմն նուազ, և բազում ուրեք զիմսատունս անգամ հակակարծիս յայդոսիկ։ Ո՞իւս ևս պատճառք անհաւանութեան թուին ինձ եղեալ անուանք և վկայութիւնք անձանօթ հեղինակաց կամ թարգմանութեանց Ատին և Յոյն մատենագրաց։ բայց ես ոչ համարիմ իրաւացի զպատճառսդ. քանզի և ոմանք յազգային հեղինակաց յիշելոց անդ և մեզ անձա-

նօթ եղելոց յայնժամ՝ ծանօթացան յետ այնորիկ արգասեօք ուղեւորութեն եղբօր մերոյ Ա. Ն. Երսիսի Ա. Արգստան, և ցուցակաւ մատենից դիւանացն Ա. Նմիածնի, և զոյ յոյս թէ և այլքն ոչ իսպառ բնաթինջ լեալք՝ գէթը ըստ մասին յայտնեսցին։ Իսկ օտարազգի մատենազրաց վկայութիւնք՝ ոչ այնպէս ցանկագոյն են՝ որչափ կարծինն, այլ բաց ՚ի միոյ կամ յերկուց՝ յոլովիցն երկու և երեք վկայութիւնք հազիւ գտանին, վասն որոյ թուի ինձ թէ ոչ զողջոյն մատեանն թարգմանեալ ցուցանեն, այլ հատուածս ինչ ՚ի նոցուն՝ ուրոյն կամ ՚ի կարգի բանից այլոց ինչ զրոց իբր կոչումն կամ ընծայութիւն, յեղեալս ՚ի հայ ՚ի նախորդաց Ատեփաննու յաշխարհի անդ Եհաց։

Դարձեալ և այլ պատճառք ընդ կարծեօք արկանելց զհաւատարմութիւն բառագրողիս՝ երեխն կրկին թարգմանութիւնքն Ատեփանոսի, թղթոցն ասեմ սրբոյն Դիտնեսիսի և Յովսեպոսի Դիբրայեցւոյ՝ ՚ի Ատինականէն։ բայց առ ՚ի զօրաւիզն կարծեացդ գործ է նախ ցուցանել թէ նոյն իցեն թարգմանիչդ այդ Ատեփանոս և բառագրին, որպէս ցարդ թուէր և ինձ իսկ գլւխովին։

Բ. Վանզի ոչ ուրեք գտանեմք ոչովինչ զրեալ զվարուց Ատեփանոսի բայց միայն յլուաքել պատմիչ, որ Ճառէ զերիտասարդութենէ Ատեփանոսի Ա. արդապետի Լովացւոյ ցամտեառն 1622, և զի դարձեալ չիք յօրինակիս մերում յառաջաբանն կամ յիշատակարանն Իառարանին, զորմէ ինդիրս է, դժուարանայր լուծումն տարակուսանացս։ և որք ՚ի մէնջ յիշատակ ինչ զԱտեփանոսէ արարեալ են ուրեք ուրեք, միոյ առն վաստակ զրեն և զթարգմանութիւնն և զբառարան, և մի միայն Ատեփանոսաշեն։ բաց ՚ի մերոյս մեծէ բառագրողէ յլուզերեանն Հ. Ա արդապետէ, որ ՚ի սկիզբն Հայկազնեան Իառարանին ՚ի տեղեկութեան անդ զմատենազրաց յորոց զբառուն հաւաքեալ է, լըր-

կին ասէ Ատեփանոս | Եհացիս , և ըզ
Շառարանն երիցուն ասէ , այլ չասէ
զօր՝ ի թարգմանութեանցն նորա արա-
րեալ և զնը կրաերոյն , և թէ ո կրսելն
այն իցէ : Աք ՚ի քնին մտեալ գտի
Ատեփանոս զյիշատակեալն յլուաքելէ
երիցագոյն գոլ , և է նա ծննդեամբ՝ ի
| ով կամ՝ ՚ի | էսպոլիս քաղաքէ | Ե-
հաց , յազնուական տանէ , և սա է
թարգմանիչ Յովսեպոսի , որբոյն Դիո-
նիսեայ , բնազմնցակամացն Արիստո-
տելի , Հայելոյ Ա արուց և Բուրաս-
տանի աղօթից . սայ | ջմիածին եկեաց
և անդ աթոռակալ եղեւ Յակովը այ
կաթուղիկոսի ՚ի , և տեղապահ յետ
մահուան նորա , և անդ մեռաւ յամին
1681 և կայ թաղեալ՝ ՚ի Հոփիսիմեանց
տաձարի : Խակ կրսելն Ատեփանոս մակ-
անուանի Ատեփանեան Ատշքայ կամ
Ատշքեան , և սա՝ ՚ի | Եհաց . բայց ոչ
՚ի | ովլայ , այլ՝ ՚ի Կամենիցայ , որպէս
նշանակեալ է՝ ՚ի գլուխ Բառարանին ,
սորա է և Տրամաբանութիւնն | ովա-
ցւոյն կարծեցեալ , քանզի և յաւարտ
սորին նշանակեալ է Ատեփանեան մակ-
անուան : Աա էր աւագ երիցանց եկե-
ղեցւոյն Կամենիցայ ՚ի սկիզբն ժԷ դա-
րու , և խնդրէր զնա Ա արգան Յով-
նանեան կարգել իւր յաջորդ յարք-
եպիսկոպոսութեան | ովլայ : Արդ սա
ինքն է հեղինակ բառագրոցն , որ և
Բազմապայծառ և Ատուածաբան վար-
դապէտ կոչի ՚ի խորագրի անդ բառա-
րանին :

Չիք երկբայել զի հայրենիք ծնն-
դեան հեղինակին մատակարարեցին նը-
մա զմատեանսն . քանզի ՚ի նոււազել ի-
մատասիրութեան ՚ի Հայս և ՚ի վարա-
տական լինել աղզին , լնդ բազմութե-
նժդեհիցն ՚ի | Եհս ապաստանեցան և
մուսայիցն սովլիեք . զյնեցւոց որ նա-
խահաւք են գաղթականին Հայոց ՚ի
| Եհս , ասէ պատմութիւնն մի նոցին՝
զրասէրս յոյժ լեալ անդստին ՚ի բնիկ
հայրենիանիւրեանց , և գրենով իւրեանց
գաղթեալ՝ ՚ի յօտարութիւն , գտանեմք

և ՚ի յիշատակարանս՝ զյոլովլից ՚ի | Եհս
հայերէն զրոց զբոյցու . բերեալս նախ
յլնեցւոց և ապա ՚ի Ասոյ և յայլ կող-
մանց կողմանց ՚ի | ով , ՚ի Կամենից , ՚ի
Օռաւանչա , ՚ի Բադուշան , ՚ի Գուրեկր ,
՚ի Այելովլ , և այն . յորոց ՚ի | ով միայն
աւելի քան հազար ձեռագիր մատեանք
գտանէին յաւուրս ՚իկովլայ , զրոց ցը-
րուեաց և վաճառեաց նա , բայց և յետ
նորա գտանէին մնացորդք ոչ սակաւք՝ ,
յորոց և յիսնիւ չափ յետ հարիւր և ա-
ւելի ևս ամաց մահուան Ատեփանոսի
փոխագրեցան այսր ՚ի մերս թանգարան :
Արդ և ՚ի սոցանէ օգտեցաւ Ատեփա-
նոս որպէս ինձ թուի , և արար զերկ-
հատոր Բառարանն Հայ և | ատին ,
| ատին և Հայ : Բաց ՚ի մերոց բնիկ
նախնեացն վաստակոց՝ ունէր Ատեփա-
նոս ՚ի ձեռին և թարգմանութիւնն ինչ
սակաւս ՚ի | ատին զրոց , արարեալս
որպէս վերագոյնդ ասացի՝ ՚ի յաւաջնոց
քան զննքն եղելոց ՚ի | Եհս ուսումնա-
սէր հայկավնեաց : Խակ եթէ զոյր ար-
գեօք՝ ՚ի ձեռին նորա և Բառագիլք՝ ՚ի
նախնեաց յօրինեալ , թէ և թերակա-
տար , ոչ կարեմ ասել ինչ ստուգիւ ,
թէպէտե միատարր ձուլուած բառա-
րանին նորա՝ չուայ զհաւաստիս կար-
ծեացդ , այլ իւր գործ զբովլանդանց ցու-
ցանէ . քանզի և հին բառարանք զոր
մեքս ունիմք՝ բառս լոկ ունին և ոչ վը-

| Առաքել Իլ . “ Ի մէջ Եկեղեցւոյն կայր գան-
” ձատուն , և ՚ի նմա գիրք և անօթք յոյժ բազում ,
” գրեանք աւելի քան զազար գերլթ , ամենայնքն
” ընտիրք և պատուականք և վարդապետականք .
” յորս էին ոսկէտուփ Աստուածաշունչք և ա-
” ւետարանք և շարակնոցք և այլ գրեանք բա-
” զումք : “ Բազում գրեանք և անօթք ՚ի
” նորին վաճառելոցն եկին յերկիրս հայոց և առ-
” մեզ հասին , :

” Յետոյ զամէն գրեանս ժողովեաց (Նիկոլ)

Որ ՚ի գրատանն էին պահած ,

Անդիւտ գրեանք որ Լով կային .

Սըսոյ խաղնիցն ելեալ էին , :

Պատմ . Նիկոլայ :

” Թէլ . Ուժգ . Ոմն լեկադ հռովմայ փափայէն
” եկաւ ՚ի Կամենիցս . . . զհայոց գրեանքն ուր
” և որչափ գտաւ , զամէնքն զիորագիրն նոտեց
” և գիր էառ , : (ԱՄ տեառն 1564) Տարեգիւր
Կամենիցայ :

կայութիւնս, իսկ առ սմա վկայութեք
եղեալ են բառքն, վասն այնորիկ և ոչ
գտանին անվկայ բառք հին բառարա-
նաց: Այլ արդ մատիցուք յերրորդ գը-
լուխ խնդրոց, թէ ո՞ք իցեն թարդ-
մանութիւնք յիշատակեալք 'ի Ատե-
փանոսէ:

Գ. Պատիսաւորք 'ի թարդմանութեցդ
են Ատինականք, երկու կամ երեք
մատեանք. յորս զառաջին տեղին ունի
Աշխարհագրութիւն ընդարձակ, յորմէ
բառս յոլովս քաղեալ է, և բազում ինչ
յայնցանէ պիտանիք են 'ի թարդմա-
նութիւն նորագիւտ իրաց և գործեաց,
որոց վասն առ մեօք նորանոր հնարին
բառք. այսպիսիք են, օրինակ իմն,
Հրետ փոխանակ թնդանութիւն կամ հրա-
նօթի, Ազելից կամ Աշուղ՝ փոխանակ
խճողակի, Ախաւեղ, զորոց ցարդ ըզ-
բարդեալն գիտէաք Ախաւեղագէս.
Աշնաւորիլ որթոյ. և այն և այն: —
Բ. Ատեանէ Պլինիոսի բնական պատ-
մութեանցն, և այս ևս յետին դարուց
թարդմանութիւն զցդ ընդ Աշխարհա-
գրութեանն, այլ ոչ խանգար և աղցի-
փեղց որպէս զնորոց անուանեալ շարա-
գրութիւնս. և թուի ինձ ծագ դարու
կամ թէ ձեւն թարդմանութիւն: —
Գ. Ատեան, այլ ոչ որպէս զառաջին
երկուսդ յաձախաբար է Պատմ. Տա-
րեկ. որ թուի տարեգրական կամ ժա-
մանակագրական պատմութիւն, նման՝
այլ որիշ 'ի պատմութենէ Փրա Ատ-
թինայ թարդմանելոյն 'ի Աերսիսէ
Պալեանց: Արտաքոյ երիցս այսոցիկ
յիշին սակաւ ուրեք Աիկերոն, Աենե-
կա, Տերենտիոս, Աիսլիիանոս, Պրո-
պերոս, գուցէ և այլք զոր ոչ յիշեմ
արդ, այլ մի կամ երկու կամ երեք վը-
կայութիւնք միայն են 'ի սոցանէ, և
որպէս կամիսեցի ասել, 'ի հատուածոց
ինչ առաջնոց թարդմանութեանց կամ
'ի նախայիշեալ Ատին զրոցդ թարդ-
մանութեանց առեալք թուին: Այս-
պիսիք թուին ինձ և վկայութիւնք 'ի
Աերգիլեայ՝ երկեակ միայն, և են մի՝
յիշականէն յԴ զրոց, այս բան.

“Եւ ըգբեզ թողում հողմոց Սելինիս արմաւե-
նոս”,¹

զոր մերս հոգեկից Ա իրակայ արքե-
պիսկոպոս՝ թարդմանեալ ունի

“Անգըր լքեալ թողի և զքեզ իսկ 'ի բաց
Արմաւաստանը Սելինոն . . . :

և միւս 'ի Աշակականացն յԱ զրոց,
այս են տողք 71 և 72.

“Իբր թէ ոչ եղիցի գետինն ատոք ընդ Արջա-
գեաւ,

,, Բայց բաւ եղիցի յայն ինչ ակօսիւ կախեալ,,²:

զոր նորս մեր քերդողահայր Բագրա-
տունի փոխեալ է այսպէս.

“Իսկ յուռթի և արգաւանդ թէ հող ցիցէ ան-
դաստանիդ

,, Խարիսարել յակօս ծանծաղ շատ լիցի յելս Ար-
ջապանին,,:

կայ և տող մի այսպիսի

,, Անդէական մատակաց ստեամբէն սնանիւր,,:

և կոչումն զրոցն է Պատմ. Ա իրգ. որ
թուի Պատմութիւն Ա իրգիլեայ: Խակ
'ի Հոմերովնէ կէս տող միայն գտի ես
'ի Ատեփանեան բառարանին, և է այս.

,, Յանտառս արկին զԱմենացանցն,,.

որ և թուի ինձ յՊիիւսականէն, 'ի հա-
տուկտիր թարդմանութեանց ուստեք:

Յայլոց օրինակագրաց Յունաց՝ 'ի
Պղատոնէ լսկոյ գտի վկայութիւնս
սակաւս. և գիտեմք զի գոյր մեր առ 'ի
նախնեաց թարդմանութիւն լայնաձա-
կատ իմաստափրին, և գտանեմք առ 'ի
յետնոց վկայութիւնս անտի բերեալ,

որպէս 'ի Ա ամբրոնացւոյ, 'ի Ա արդա-
նայ, և այն. եհաս և 'ի մեր ձեռս

մասն մի նորին գործոց, ոչ գիտեմ 'ի
Ա ագիստրոսէ եթէ յերիցագունէ ու-

մեքէ թարդմանեալ. շասէ Ատեփանոս
զանուանս զրոցն ուստի զվկայութիւնսն
առնու, և են սոքա *.

Ապարանեաց զիս թշնամույն բռնութիւն:
Կայ թափին, ոսկերիչն, ասրաւոր:

Կեաս յաշազապէս, խօսիս ատելաբար:

¹ Teque datis linquo ventis palmosa Selinus.

² At si non fuerit tellus faecunda, sub ipsum
Arcturum tenui saterit suspendere sulco.

Զո՞լ արդեօք արտակոչել աստ կամիս 'ի գուրս :
Զովաքս 'ի բարանտառեղէն արկից 'ի ներքս :
Գաղթոս աեղեք . Գաղթոս լերինք :
Նկատեա յԵղնդնեկէ մինչև ցծայր հերաց :

Մատիցուք արդ տեսանել եթէ զի՞նչ
ինչ 'ի մերոց հայրենի մատենագրաց
ցանկալիս ունիցի Մտեփանոս . յորս՝ որ-
պէս և 'ի սկզբան բանիս յառանձին դաս
զատուցի , Պատմագրութիւնք են ցան-
կալիք ինձ քան զամենայն մատենա-
գրութիւնս նախնեաց :

Դ . Եւ ըստ բաղդի Ճոխագոյն են 'ի
Մտեփանեան Շառարանիս թիւ և վը-
կայութիւնք ցանկալի պատմչաց , զորս
չունիմք մեք այսօր 'ի ձեռին . վասն այ-
նորիկ և զսակաւ շիթս բանիցն իբրև
յանապատէ ժողովեալ 'ի քիմն պապա-
կեալս՝ առաւել ևս տոջորիմք աղբերացն
անձկաւ : Պալսաւորք 'ի պատմչացս ըստ
պատուականութեան հնութեանն և
Ճոխաբանութեան թուին ինձ հինգ
կամ վեց , և այլք տամնիւ չափ յետ նո-
ցա , զորոց անուանս մի ըստ միոջէ կար-
գեցից , հակիրճ տեսութեամք զմիոյ
միոյ 'ի նոյանէ :

Ա . Ի պատմչացս է Դ գիրք Մովսի-
սի Խորոնեցոյ , զորմէ յայլումնուագի
եհաս ինձ խօսս աւնել 'ի Ճեմարանիս ,
և տպագրութեամք իսկ հրատարակե-
ցաւ ² վասն որոյ և աւելորդ աստանօր
դառնալինձ 'ի նոյն :

Բ . Հովհաննես Պատմիչ . ոչ Մամի-
կոնեանն և ոչ կաթողիկոսն , թուի թէ
և ոչ Ճինաւոր վարդապետն Լոզեւն՝
զի նա զիւրոց ժամանակաց զդէպսն՝ ա-
սեն զրեաց , այլ այլ ոմն և հնագոյն
քան զնոսա . քանզի ոչ գտանի առ նմա
յիշատակ այսր քան զե դար , և թուի
'ի հինգ գիրս տրոհեալ զգործն . զՆայ-
կազանց Ճառէ և զՄքակունեաց՝ ոջով
և մանրամասն քան զՄյորոնեցին , որ-
պէս է գուշակել 'ի նշխարաց բանիցն .
յորս յիշէ նա զԸուսաղբաթար խօսեն
Հայկայ , զՄանն Շելայ տեղաշար-
ել զնա , զՆեծելոցն սրաթեութք

1 Վկոյութիւնք միայն յԱ-Ե տառիցն են :

2 Բաղմակէպ թ . 69 :

առ Ռելն հասանել (զօրաց նորա) . և
բազում ինչ բնականս և սովորոյթս ,
զոր օրինակ Շաղմաժայու լերինք կոր-
դուաց , լերինք ծխողք երևեալք 'ի յորդ
անձրեաց , երեքեղջերեայ ոչխարք ,
Ուկազգեաց երթեւեկք 'ի պաղատան ,
Հրանկարութեան արուեստ , Ճնարա-
կագոյն փաղփիւն երանգոց , Մնգուրե-
ղէն երփնիւք զարդարեալ առագաստք ,
ապարանք Քուաքատակօք յօրինեալք ,
Ապասիկք և գահաւորակք զոհարա-
նաց , և այլն :

Դ . Մէսրովալ Պատմիչ . և սա հնա-
գոյն քան զլյուկցն որ 'ի ժ դարու գրեաց
զպատմութիւն մեծին Կերսիսի , յա-
ճախ 'ի սմա Հոռվմայեցւոց լինին յի-
շատակք , որպէս Պայոս ապա բգեշխն
Պաղղիոյ , Յանցակերպ պատմուՃանք
Հոռվմայեցւոց , բազում Լեզէոնաց
զօրս 'ի Միջագետս աւաքել և այլն : Ի
հայկականացս յիշին Մմբատ՝ որ զեր-
կիրն ագուռեաց (զբումբած ած) Մարաց ,
Շաբկէն 'ի Յօթափական ելեալ ձի ,
յիշի և սուրբ Կերսէս , և Յօրոս ոմն
Լզար և սոտնագին մարմնով . և բա-
զումինչ սովորոյթք և արուեստականք .
որպէս , Չամչագինի Մրաց , Մար-
խեայ տուփ , Մրմոց յահնձապակումն ,
Յցաշինութիւն պարսպաց , Քարակու-
տեղմ ամբացուցանել զկաթողիկէն ,
Միւնք 'ի ծիրանեքարէ , Կատիկայք
յարեւմտից , Հերական չուանք , և այլն :
Որիշ 'ի սմանէ թուի ինձ և այլ
Պատմ . Մէսր . յիշատակեալ 'ի Շա-
ռարանիս , հանդերձ թուով զլիսահա-
մարոց որ ժամանեն ցխնձ . և կարծեմ
զսա վարս որբոյն Մէսրովայ՝ զատ 'ի
պատմութենէ լորեանն . քանզի և 'ի
ցուցակի մատենից Ճմիածնի յիշի պատ-
մութիւն վարուց Մէսրովայ առան-
ձինն 'ի լորեան պատմութենէ :

Դ կամ Ե . Մատթէոս Պատմիչ . ո-
րիշ յլուհայեցւոյն պատմութենէ , այլ
թէ և հեղինակն որիշ իցէ ոչ ունիմ
հաստատել . քանզի ամենայն օրինակք
Մատթէի պատմութեանն որ առ մեզ
գտանին 'ի Իլ կամ Իթ գլխոց սկսանին
'ի և թուականէ Հայոց , և գուցէ ա-

ուածին ի՞և գլուխք բանիցն իցեն յիշա-
տակեալքն առ Ատեփանոսի , յորս յիշի՝
Դագէս ոմն զօրավար՝ զոր ոչ գտանեմ
առ այլ պատմիչս , Շակուր ոմն լրջա-
դոյն աչօք , և այս այն Շակուր է՝ զորմէ
և այլք՝ ի պատմացս ցանկագոյն զըսց
առնեն , և թուի այր նշանաւոր՝ Հայոց
կամ Արաց արքայ կամ նախարար , և
Արգիս ոմն ռոճկապէտ , զոր և այլ ոմն
յիշէ պատմիչ , որպէս տեսցի՝ ի մօտոյ .
յիշէ Արտթէոս յաձախ և զինուորա-
կան բանս և սովորոյթս , զոր օրինակ
Շուլքապէտք , Շուլքական զօրք , Խաղ-
մափորայ զբերգաւն փոսել , զ Ձողս
սայրասել և ՚ի հրոսակն դիմել , Օ ար-
կոցաւ զ Շարբուտս բաղիսել , Խակա-
կոփել զերկիր նաև զցիցս յափն գետոց ,
Լապարել զ Մրձաքար վէմս , Այրա-
ձիւթով պատել գտապանն , Շարման-
դաւոր վերանոց , և այլն :

Զ . Այսիթար Պատմիչ , որ և Կնե-
ցին թուի ինձ , քանզի ժամանակազրա-
պէս ասի զսմանէ զրեալ զպատմու-
թիւնն . և ՚ի հատուածս աստ առ Ատե-
փանոսի՝ յիշատակին “ Կնուածե ըրջ-
մունք ժամանակաց , և Ա խալասանու-
թիւնն Խասեբեայ . իսկ զարմանալի
այս է զի գլխաւոր մասն պատմութեանն
նոյն թուի ընդ վերոյ նշանակեալ պատ-
մըիդ Արտթէի , զուցէ թէ և մին ՚ի
միւտոյն առեալ . քանզի յիշի և ՚ի սմա
յանուանէ Շակուր միայն երկիցս , և
Արգիս պանդոկապէտութեան պաշ-
տամարք , զոր Արտճկապէտն կոչեաց
միւտն , և զոր նա Ա այրաձիւթով պա-
տեալ տապան ասէր , զնոյն թուի սա
ասել , “ Օ տապանակն մոմաձիւթեցին
և արկին ՚ի կուր գետն . . : Յիշի առ
սմա և Աթինիկ Տիկնական պատուոյ
հասեալ , և Տիգրանայ ուրումն հրա-
մայել բաղիստրագործաց առնել բա-
րանս , ունի և այլ զինուորական բանս
և սովորոյթս ընտամեկանս :

Է . Ատեփաննոս Պատմիչ . ոչ Ասողիկն
և ոչ Աւոպէլեանն , այլ Հնագոյն և հը-
նագունից Ճառող , նշանաւոր և սա .
որոյ զլիսաւոր Ճառ պատմութեանն
թուին ժամանակք Բ Արտաշիսի , զի

Արտաշատայ և զ Ամբատայ երկիցս
բառքն ածեն վկայութիւն , և ոչ բնաւ
զայլ յատուկ անուն . յիշի առ նմա և
Հայրապէտական թագ յեւեալակամքք
պատուականօք , և այլն :

Ը . Օ ենոթ Պատմիչ . որ զուցէ նոյն
իսկ Գլակն իցէ Ասողին , այլ հատուածք
բանիցն բերեալք՝ ի Ատեփանոսէ ոչ
գտանին ’ի ծանուցելումն մեզ պատմու-
թեան . յանուանէ յիշի առ սմա միայն
Դարեգին ոմն դաւող ’ի խախարայէն
կամ ’ի խաւարայէն տան սպանեալ :

Թ . Փ . Խզնիկ Խողբացի և Յ . Խզն-
կայեցի . յետոյ ուրեմն կարգեցի զա ,
քանզի զաւածինն ընդ դատաստանաւ
թուեցաւ մատենագրիս վլիպասանելն . որ
զի բազում ուրեք առ Ատեփ . գրի Եղնէ .
մարթ էր և յ լ յ զ ն կ ա յ ե ց ի ն Հ ո վ շ ա ն ն է ս
ձգել զկարծիս , զի և զսա գիտեմ պատ-
մագրեալ զ Ա ա ր ս Ա ու ս ա ւ ո ր ց ի ն մ ե ր ո յ ,
զատ ’ի ն ե ր բ ո ղ է ն , զուցէ և այլ ինչ ,
կամ թէ զերկոսին ընդ մի շիոթեալ .
բայց և ուրեք ուրեք մեկին գրին ա-
նուանք նոցա . զորիցս յիշի յայտնապէս
Խզնիկ Խողբացի . ութիցս կամ առաւել՝
Խզնիկ . Հնգիր կամ վեցիր՝ Խզնկ . և
բանքն պատմականք են բազում ուրեք ,
թէպէտ և չիք անուն յատուկ , այլ և
թուին ինձ թէ սրբոց արանց պատմու-
թիւնք իցեն և ոչ արտաքնոց անձանց .
միանգամ և եթ յիշի Խզնկ . Գ . պատ-
մութի , որ է Գ . գիրք պատմութեանց ,
և բանն է՝ “ Կ յ մ բ ա կ ա ն զ օ ր ք ն ՚ի Ճ ա կ ա տ
դ ա ր ձ ա ն , . . . իսկ զ Ճ ո վ շ . Խ ր զ ն կ . մի
նուագ գտի յիշատակեալ պատմական
բանիւ , որ է այս . “ Կ ա մ ի ն խ ա մ թ ա-
ւոր նստեալ վազէր , . . : Ա ր դ յ ա յ ս մ ա-
մենայնէ հաւանական երեկի երկուս
աստանօր պատմիշ տեսանել և ոչ մի ,
թէպէտ և պատմութիւնքն երկարք ի-
ցեն կամ ոչ , և այս են վկայութիւնք
բանիցն և անուանցն նշանակութիւնք * .

Եղնիկ Կողբ . Ասէ թախանձ մեզ եղեր խնդրե-
լով զայդքան դրամ :

Առաւել գտաւ քան զհամարականն Պղատոն :
Եղնիկ . Հեծաւ յոստնաւոր ձի , բայց ’ի թօթա-
փելցն խօթացաւ :

Պարգևէ նմա զասացեալն Մուկուլայ ակն .
զոր և . . .

Պատուեն զնա հիւրընծայիւք :
Հարին զսուրբն խթանաւոր վարոցօք :
Յաստեացս վաղահաստրար փոխի :
Եզնկ . Առ ժամմի աեզի տայ ընդգիմաբանից :
Եբեր նմա խանկաւ գալար թուզ :
Որպէս զիայտ հերձանելի՝ գքարինս ձեզքէր :

ԺԱ . Համամ . Գիտեմք զի և Համամդ վարդապէտ Արեւելեայ մակաձայ նեալ զրեաց պատմութիւն . և յայն պատմութենէ կարծեմզյիշատակեալսն առ Ատեփ . զսակաւ տողս առանց յաւելլոյ զՊատ . ստորագիր պատմչայն . և են տողքն *.

Նոխազերգուացն ետ արժանաւոր ընծայս :
Երթային քառասնեակք և գոյնպէս գառնային :

Ուրե Ատեփ . և այլ վկայութիւնս 'ի Համամայ , այլ յարէ 'ի նոյն և զի՞եր . մասնիկ , նշանակ քերականութեան նորա . իսկ եթէ ասիցէ ոք և զայս յիշեալ տողքս 'ի քերականէն լինել և մոռացեալ զմակդիրդ , ես ոչ պայքարիմ:

ԺԲ . Հակոբ պատմիչ . դուն ուրեք յիշի , և 'ի բանս նորա գոյ անուն լիեզեստինոսի (պապի) վասն որոյ և յետնոց դարուց մատենագիր երեխ :

ԺԳ . ԺԴ . ԺԵ . Պատմութիւնք Արաց , Ացուանից , և Դավիթու . յաճախտագոյն են վկայութիւնքյառաջնոյն , թէ ափէտ և ոչ առատք , և թուի զատ 'ի պատմութենէ անտի Յուանշէրի զորմեքս ունիմք , թարգմանեալ յժկ դարէ , որպէս հաւանելի է :

ԺԶ . և այլն . Հիշն առ մի և եթնուագ Պատմ . Ըիր . որ է պատմութիւն Ըիրակացւոյն , զի և սա ընդպատմիչս Համարեալ է 'ի Արթիթարայ Այրիվանեցւոյ , գոն և առ մեզ յանուն սորա կամ կարծեօք՝ բանկք պատմականք : Եւ բանն զոր ածէ Ատեփ . է այս . ' Հիկին Համարառուքն առ զործակալս „ :

Հոյնպէս Պատմ . Արիան . որ եթէ ոչ իցէ զրիպակ զրեալ , գուցէ զի՞րիոսէ կամ զարիանոսաց հերձուածոյն բանքը իցեն : — Դարձեալ Պատմ . Արթ . որ թուի համառօտ բանիւք դասակարգութիւն կաթողիկոսաց որպիսիս ունիմք և մեք զանազան ոձով : Հի-

շի զմի նուագ և Արովս . Պատ . այլ պարտ է ընթեւնութիւն . Դատ . քան , զի վկայութիւնն " Պաոյգ տայ դստերացն „ 'ի դատաստանագրոց Արթիթարայ է Դաշնին : Խցեն թերեւս և այլք այսպիսիք աննշանք , որք վրիպեցան յինէն կամ զանց արարան 'ի հաւաքմանս :

Իայց յետ ամենեցուն սոցա արժան է զբնաւիցն վեհագոյն և զյոյգ ցան կալին կարգել զանանուն Պատմութիւն Հայոց , զՃոխագոյն՝ ոչ միայն քան զայլս 'ի վերոյգրեալ պատմչացդ , այլ թէ և քան զամենանի մատեանս՝ յորոց վկայութիւն առնու Ատեփ . զի իբրև չորս հարիւր վկայութիւնս բառից 'ի մշջ բերէ 'ի մատենէ անտի , և պատմութիւնն ձառէ զհայկազանց և զի՞րշակունեաց , այլ և զկրսերագոյն հարըստութեանց ազգիս մերոյ . և թուի ինձ այս այն պատմութիւն Հայոց , զորմէ գտի նշանակեալ ուրեմն , թէ կը կամ կը՝ պատմիչք են լեալ Հայոց , յորոց հաւաքեալ ուրումն զրեալ է ութ զիրս Պատմութեան Հայոց , որ գտանին ասէ 'ի Աիս և 'ի Աղմասավանս . ընթեռնումք և 'ի զիւանս Լամիածնի զանանուն պատմութիւն Հայոց , զուցէ թէ և 'ի Լեհս անկեալ էր օրինակ մի մեծի և յոգնափափագելի պատմութեանս , և անտի եգիտ Ատեփ . առատ նիւթ բառարանին : Ճոխագոյն 'ի մեծի պատմաբանութեանս թուին դէպէ ԲԱրտաշիսի և որդւոց նորա , զի իբրև երեմինից յիշի Ամբատ ոմն զարմանալի այր , որ առանց երկբայութեան Բիւրատեանն է քաջն և քան զյոլովս 'ի քաջաց արիագոյն . և յետ նորա Տիրանոմն արքայ՝ զոր ամենափարթամ կոչէ 'ի թագաւորս և ամենակարող յամենայնի , որք թէպէտ և ըստ Խորոնեցոյն պատմութեան՝ ոչ Ա . Տիրանայ և ոչ Բնն 'ի ձահ գան , այլ եթէ չկամիցիմք 'ի Հայկազնն ձգել զմանքդ , զորմէ ոչ կարծեմ ոձով պատմութիւն

1 Յօր . սիալ համարիմ զերկրորդ թիւդ գրեալ թէ . յետ կարգելոյ նախ զ' կը . այն զի տռաւել քան զ' իշ պատմիչք միշտ ծանուցեալ են յետ ԺԳ դարու :

գրեալ յետնոց , հարկ է դարձեալ յառաջինն Տիրան Արշակունի հանել , կամթէ յայլոք Տիրան՝ բնաւ անյիշատակ առ այլ պատմիչ , գուցէ Ա Երին Հայոց թագաւոր : Ի՞այց թողեալ աստանօր զինդիր՝ որ արտաքոյ է առաջարկութեան ձառիս , գլխաւորեսցուք զսա անցեալ և ընդ յետին գլուխ բանիս , թէ զինչ բայց ՚ի պատմչացն այլ նշանաւոր իրք կամ մատենագրութիւնք յիշատակին ՚ի Ի՞առարանիս :

Ե . Ա յնչ երկբայիմ զի ընտիր ձաշակ բանասիրացդ աստատին սլացաւ ՚ի կաձառս Ասկեղինիկ թարգմանչաց դարուն , խուզել նորս ՚ի նոցայն վաստակոց : Ա յլ ինձ աւազ , որ ոչ կարեմ յայսմ մասին որպէս ՚ի պատմչացն ձոխաթար բաշխել աւար . սակայն և այս միսիթ ալութեան , զի թէպէտ և սակաւք յիշին առ Ատեփ . թարգմանչաց յիշատակք , այլ ընտրելագոյնք ՚ի նոցանէ են . Ա . Խորոնեցի , Ա մերէ , Ազնիկ և Ազիշէ . նշանաւոր ՚ի բնաւսն և ձոխագոյն ՚ի նշխարս բանից՝ դարձեալ յամենայնի յառաջադէմն Խորոնեցի գտանի . և նոր ինչ զրաւոր վաստակ սորա Պիտոյիցն գիրք են , զոր թէպէտ և մեք ունիմք անթերի , և նոյն ինքն Ատեփ . ՚ի կարգել զՊէտք բառս՝ վկայէ այնչափ գլխովք բովանդակել զգիրսն՝ որչափ մերս ունի տպագիր , սակայն ՚ի կարգս բառիցն յաւելու յիշատակել գրեալթէ նոյն չափ ևս գրլուխս ՚ի գրոց Պիտոյից , ընդ բնաւ զթգլուխ . և որպէս ՚ի ստորև գլխոցն տըպագրելոց առ ՚ի մէնջ կարգէ Ա . Խորեն . Պիտ . և զգլխահամարն , այսպէս և զայրոցն կարգէ . և քանզի և շարագրութիւն բանիցն յար և նման է ոճոյծանօթիցն մեզ գրոց Պիտոյից , որպէս ՚ի ստորակարգեալ հասուածոցս երեխից , առաջ թուի ինձ թէ Խորոնեցին կամ Ամէոդորոս աշակերտ նորայետ առաջնոց՝ ծթ զլիսոցն՝ յաւել և զայդոսիկ :

1 Կամթէ այլ ոք ՚ի ձարտասանից ժամանակին յաւել զայդոսիկ , որպէս Եղբասն Անգեղացի

իբրև Բ մասն կամյաւելուածս , որպէս ահա և ՚ի տպագրեալսն առ ՚ի մէնջ կան յաւելուածք նշանակեալք Գ . գըլուխք : Ա Մ տառէ և անդր հաւաքեալ է իմ վաթսնիւ չափ վկայութիւնս , զի զանց զառաջնինն արարեալ էի '

Յետ Ա ովլիսի արժան է դասել զեղքայր նորին զԱ մերէ , քանզի և սորաքան զայրսն բազմաթիւ են վկայութիւնքն . զսորա բաց ՚ի միոյ կամյերկուց ձառից՝ չունիմք մեք այլ ինչ զըրուած , բայց գիտեմք զի է նորա գրեալ և Պատմութիւն , և կարծիք են թէ և մեկնութիւն Ա ովլաննու աւետարանին . և ահա մեկնական բանից են հատուածքս զոր Ա տեփանոս ընծայէ , բայց ոչ Ա ովլաննու այլ գրոց Ա ովլիսի՝ որպէս կարծեմ * .

Ծանթից հրացմամբ կայծակունք արձակին և սիրով Տեառն հրացեալ սիրաք :

Սողոմոն ոչ մանկաբար այլ ծերաբար վարեր զթագաւորութիւն իւր :

Յեանաբար մեզ ասելի և յազագս նեռին :

Աստուած միայն նախագիտէ զամենայն լինելոցն :

Զբանին մարմնացելոյ նախածանօթութիւնն ունեին չիւշտակէ :

Սերմանական գործովք զիւր ապրուստն ունի : Գրեցին նոքա բազում ինչ սիսալուտս , զի ոչ յԱսսուած . . .

Զի որք զսերմանիս վերասփռեն զհարիւրապատիկն շահին :

Ըղձիցն իւրեանց փափագականաց սուրբքն համին :

Ընդ այնքան ժամանակ ոչ փատացան մարմինք սրբոցն :

Աշխարհ օրինագրութեամբ թագաւորաց յարդարի :

Ուսումնակցի երկուցս հարազատաց եղթարց և ազնուագոյն զրչի Ա զիշեայ բանից սակաւ հատուածք են առ Ատեփ . և ոչ նշանակեալք յոյց զրոց :

Կակ երիցագունի քան զսոսա աշակերտին Ա եսրուգայ և Ա ահակայ՝ Ա զնըկայ քաջի՝ բաց ՚ի պատմական նշխա-

կամ Ղազար , կամ խոսրով , զի և յետնոյս ընծայի նկարագրութիւնն Մենամարտութեան Դաւթի և Գողիաթու ՚ի ձառընտրի ուրեմն դիւանաց էջմածնի :

1 Աստանօր խմբագրէ ձառախօսն զվկայութիւնն յորս գտանին բառք նորագիւտք արտաքոյ հայկազնեան բառարանին :

րացն , գտանին առ Ատեփանեայ և դոյզն նշխալք խրատական բանից :

Յետ ոսկեդարեան թարգմանչաց՝ նշանաւորք են ՚Քերականքն յիշատակեալք ՚ի Ատեփանոսէ , թէպէտե ոչ յաձախ . և են սոքա՝ Ո՞վլսէս որ է նոյն ինքն ՚Քերդողահայրն , զորոյ ունիմք մեք էջս ինչ բանից ՚ի հին քերականի , իսկ առ Ատեփ . այս ևեթ վըկայութիւնք ածին ՚ի նմանէ * .

Որպէս շրջապատել զաւելորդս :
Հնչէին Սրնդական ձայնարկութեամբ :
Երթային տասնականք :
Զգուսանական գելելիկան՝ քնարական քերդութիւնն ասէ :

Բ . ՚Քերական է Ատեփանոս , սորա ևս հատուածք սակաւ նշանակին ՚ի լուսանցս հին օրինակի մեկնութեան միոյ քերականի առ մեզ , յունարէն գրով . իսկ ՚ի Շառարանի աստ զայս ևեթ վըկայութիւն գտանեմ* :

Զարհեատն քերականական ամենեցուն կարևոր՝ շարամեկնել յանձն առաք :

Գ . ՚Քերական է Համամն նախայիշեալ , յորմէ հատուածս բանից երկարս ընծայէ մեզ Լյրզնկացի յընդարձակ հաւաքման քերականին իւրում . երկու կամ երեք վկայութիւնք են սորա առ Ատեփ . որպէս *

Ծառաստան , նոհաստան , թթենոց :
Ծաղկոց Տորբանոց են պարունակէս :
Զհաւն Փաղարիկ և մէք ըստ Յունաց փաղարիկ ասեմք :

Դ . ՚Քերական յիշի կրծատ անուամբ Գրագ որ թուի ՚Գագիկ , թէպէտ և այլուր չլիք իմ լուեալ քերական ՚Գագիկ անուն , բայց չլիք տեղի անհաւանութեան ընդունել և զդա ՚ի թիւս քերականաց կամ մեկնչաց նորին , յորոց արդ յիշեալդ Յովլէ . Լյրզնկացի յիշատակեալ զլի Ո՞վլսէս , զ՚Դաւիթ , զ՚Շարսեղ , զ՚Համամ և զ՚Մագիստրոս , գտի ասէ և այլ երիս հին քերականս առանց անուան , յորոց մի արդեօք իցէ և ՚Գագիկս , թէպէտ և կան և այլ քերականք արտաքոյ թուելոցդ Լյրզնկացւոյ , որ-

պէս Ատեփաննուն վերոյիշեալ , Ո՞ամբը , այլ և Լյլիչէ որպէս ասի ուրեմն :

Յետ Ո՞արգմանչացդ և ՚Քերականաց՝ նշանաւորք ՚ի Ատեփանոսէ յիշատակեալք՝ մնան երկու վարդապէտք թկամ ժ գարու . Տիրան և Շամ . Տիրանայ գրուած ՚ի Ատեփ . Շառարանի թուի միայն Ո՞եկն . Շանդոց , յորմէ և զվկայութիւնն բերէ , հանդերձ նշանակաւ գլխահամարոց :

Կան Տիրանայ և թուղթք հաւատոյ գրեալ առ Ո՞ենեքերիմ արքայ Շմծը . և պատասխանիք պէսպէս հարցմանց թագաւորացն Շաղուանից Շպտմանէհի և Փիլիպիէի , որք յիշատակին ՚ի Ճուէ թիւ մատենից Լյմիածնայ , և առ մեզ հատուածք բանիցն ՚ի գիրս վկայութեանց ձառին զընութեանցն . Շքիստոսի : Խակ Շմամայ է թուղթ առ Շտոմ Շնձեացեաց Լյխան , որ և սա գտանի արդյիշեալ մատենիդ Լյմիածնայ , իսկ առ Ատեփանոսի հատուածք են :

Օ ատ ՚ի սոցանէ ոչ յիշեմ զայլ ոք նշանաւոր , բայց զտաղս ինչ Ո՞ագիստրոսի արտաքոյ ծանուցելոցն մեզ , և երկուս մատենագիրս , մին նշանակեալ Յուս . Գ . և բան ՚ի նմանէ : “ ՚Քան . ” զի զյապաղմունս զինուց զորս իւ . ” ըեանց անուամբ բաղասեցին՝ յընկե . ” բաց անձնէ պատառէին , : Լյւ միւս ՚Դաւիթ . ՚Կար . որ իցէ արդեօք մեծ իմաստասէրն Շնյաղթն ՚Դաւիթ , այլ ոչ գիտեմ զինչ նշանակէ ՚Կարն :

՚Դաւանին և տողք ինչ տաղից յանգաւորք կարի բարեքիկ , առանց անուան մատենագրի , յորոց սակի են այսոքիկ .

- 1 ՚Ծով հանդարտիկ ալեակ մեղմիկ
Զտուփին տանէր յալքայ գլսարիկ :
- 2 ՚Ի կոհակաց Ալքերովմին
Ոչ զբ զերծաւ անկեալ ՚ի նմին :
- 3 ՚Տեսի գանդրուկ արզայ մանուկ
Զգեղաբնակ եղինս ետ ժանա արօրի :
- 4 ՚Գնդախաղացքն յար Ճեմէին
Զգընտական արձակս քաջ ճօճէին :
- 5 ՚Ըրջակապեա զգօտիդ ուժգին
Մատիր ՚ի մարտ ընդ գարեգին :
- 6 ՚Տուր աղեղնիկ իմ որդեկին
Զի խաղասցի ընդ ձեր մանկաին :
- 7 ՚Մի տար գիւին քեզէն առթիկ
Զի մի լիցիս նորին որսիկ :

8 Գարունն առնու զսերմանին .
Ամսովն ասյ զատոքագինան :
9 Արդիւնաքաղ մրջիմն յամռան :
Համբար առնե ինքն իւր ձմռան :
10 Գիշերացեալ հայոց ազգին
Ճրագունք անչելք երկուք վառին :
11 Բարձրաբերձ եղեւնիկ
Մերս ունի գարաստիկ :
12 Դստրիկ իմ սիրուն
Զիանդ ես թաղծուն :
13 Դընէր ՚ի քուն ձայն Լալային
Զայն գեղեցիկ արքայորդին :
14 Այլք ձեռնակայթք պարս առնէին
Միմեանց ըշչետ ՚ի ման գային :
15 Մանէկաւոր աղջկունքն ելն
Եւ ընդ փողոց ողլու երգէին :
16 Զտիգուկն առեալ յիւրում ձեռին
Խաղար ճանէր արքայորդին :
17 Սարեկիլն սարսափէր իր ըղջերմուտ և զգե
ւահար
Իր ըղջուսան չարփարազան ինքըն զարնէր
ինքըն խաղար :

Աւ. Ի.

Ուրոյն յայսցանէ թուի գտեալ Ատե-
փանոս և տաղ մի զթունոց պէսպէս
չափաւ , զի ոչ սակաւ տողք են նկարա-
գրականք զբարուց հաւուց , որպէս .

Արտօւտիկն դընէր վեղար
Զերդ աբեղայ աղջմարար :
Յանձըն հագէր կարմիր կապայ
Եւ ՚ի ներգուսա գեղին աստառ :
Զագուկն ՚ի բունկին
Զայնէր քաղցրագին :
Ագռաւն սահիք քորէր զգեատին
Գոռար ձայնիւ զվադն իւր գարձին :
Կարդան երգհաւք քաղցրաձայն
Լընուն զանտառն ամենայն .
Խոկ թընիկատարն ՚ի գագաթան
Ունի վեղար սեւագունեան :
Խոկ Լընեանիկն իբր խելագար
Տայ զվեզն ՚ի շուրջ ինքն անդադար :
Սալամին գայր իբրև զկաքաւ
Պէսպէս պուտիք զարդարանաւ :
Յոռոպիկն էր զարդարեալ
Գլուխն ունէր թագ ու կատար :

Հուսկ ամենայն գիտելեացս յաւելից
և զայս ոչ աննշան ՚ի Ատեփանոսէ . որ
ոչ գիտեմ ուստի առեալ զանուանս
Հայ ամնոցս ոչ հայեցիս ասէ , այլ քաղ-
դէացիս , և կարգեալս ՚ի Կաբօնասսա-
րայ Ասթելացոյն արքայէ , այն որ կար-
գեաց և զհուզակաւոր թուականն Իա-
բելովսի 747 ամօք նախքան զ' Քիստոս ,
և յանուն նորա կամ աստեղագիտի նո-
րա Կաբուզարդայ ասէ կոչեցեալ զա-
ռաջին ամիսն Կաւասարդ , որ ոչ սակաւ

Հանգիտութիւն ունի ձայնի և ստու-
գութեան բերէ ցոյցս . թէպէտ և ոչ
հաւասար նմին վարկանիմզայլոց ամնոց
անուանս , յորոց զ' Հոռ , Արաց , Վե-
հիկ , Վարերի , Վարգաց և Հրոտից՝
Պարսից անուանս ասէ . զ' Վհիկ , Աահ-
մի և Տրէ քաղդէացիս , զ' Քաղոց Վա-
րաց բառ , և զ' Վրեգ միայն Հայոց :
Օ որոց զքննութիւն այլոց թողում ,
Հանդերձ այլովքն , և ակն ունիմթէ
ներողասէր կաձառդ ոչ իբրև անթերի
առ յինէն համարեալ ունիցի զխօսս զայ-
սոսիկ . քանզի և ոչ մանրամասին քըն-
նութեամք ընթերցեալ էր իմ զբառա-
րանն , առ ՚ի տալ զրոյց զայնուանէ , այլ
որ ինչ ինձ ՚ի պէտս էր՝ զայն միայն հա-
ւաքեցի յայնժաման , և այժմ յառաջնոցս
նշանակելեաց զսա շուտագրեցի :

Խակ ՚ի կնիք բանիցս ՚ի պարձանս
հեղինակի Աառարանին արժան համա-
րիմյիշել և զձոխութիւն բառիցն , զօր
թէպէտ ոչ արկի ՚ի թիւ , այլ ոչ շատ
սրակաս քան զմերոյս մեծի բառարանի
կարծեմ , իցեն իբրև 4500 կամ 5000
բառք նորագիւտք ՚ի նմա , զի իմ 4200
բառս նշանակեալ է անտի յիմում Վր-
ձեռն օրինակիս , ունելով յառաջագոյն
նշանակեալ ՚ի նմին աւելին քան զայն
այլուստ բառս անտիս . և երկրորդ
զմեծութիւն գործոյն՝ վասն տաժանե-
լի վաստակոցն , զոր քաջ գիտեն և վը-
կայեն որք յոթելեան երկամբք զմերս
Հայկազնեան բառագիրս կառուցին , և
Վտեփանոս միայնակ՝ որպէս կարծեմն ,
կանգնեաց զիւրն՝ բովանդակ գարու
միով յառաջ քան զսա . վասն որոյ և ՚ի
վերայ ամենայն թերութեանցն՝ որք
նշմարիցին ՚ի նմա , մեծ են վաստակք
առնն և փառք եթէ ոչ քան զհանուլց ,
գէթք քան զյառաջագոյն քան զինքն
եղելոց և մեզ ծանուցելոց Հայկազն
Աառագրողաց :

Հ. Ղ. Մ.